



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«24» հոկտեմբերի, 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 57-Ա

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կանոնադրության» 12-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրի ձևը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագրի ձևը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N° \_\_\_\_\_

ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և \_\_\_\_\_ ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր \_\_\_\_\_ ի

(գիտական կազմակերպության անվանումը)

(անուն, ազգանուն)

(այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի N° 450-րդ հոդվածի, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրով Կոմիտեն ՀՀ 20.. թվականի պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի «Գիտական միջոցառումների կազմակերպման աջակցություն» ենթածրագրի ֆինանսական միջոցներից Կազմակերպությանն է տրամադրում ֆինանսական միջոցներ՝ \_\_\_\_\_

(ժամկետները, անցկացման վայրը, միջոցառման անվանումը)

գիտական միջոցառման կազմակերպման համար:

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

Պայմանագրի գինը (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը) կազմում է \_\_\_\_\_ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դադարում է

Պայմանագրի 4.5.2 կետով նախատեսված հաշվետվությունն ընդունելու մասին հանձնման-  
ընդունման արձանագրության ստորագրմամբ:

3.2 Պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել գործող օրենսդրությամբ սահմանված  
կարգով:

3.3 Կոմիտեն ֆինանսական միջոցները փոխանցում է Կազմակերպության բանկային  
հաշվեհամարին՝ Պայմանագիրը կնքելու օրվանից 20 օրվա ընթացքում:

#### **4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1. Պայմանագրի Կողմերն ունեն «Գիտական միջոցառումների կազմակերպման համար  
ֆինանսական աջակցության տրամադրման կարգով» նախատեսված իրավունքներ և  
պարտականություններ:

4.2. Կոմիտեն իրավունք ունի.

4.2.1. ստուգել Կազմակերպության կողմից Պայմանագրով ստանձնած  
պարտավորությունների իրականացման ընթացքը,

4.2.2. պահանջել կազմակերպվող միջոցառմանն առնչվող փաստաթղթեր և այլ  
անհրաժեշտ տեղեկատվություն:

4.3. Կազմակերպությունն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրի կատարումից՝  
Կոմիտեի կողմից Պայմանագրի 3.3 կետի խախտման դեպքում:

4.4. Կոմիտեն պարտավոր է Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում  
տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.5. Կազմակերպությունը պարտավոր է.

4.5.1. Պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելիս առաջնորդվել ՀՀ  
գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Գնումների մասին» և «Հաշվապահական  
հաշվառման մասին» ՀՀ օրենքների պահանջներով,

4.5.2. գիտական միջոցառման ավարտից հետո 15 օրվա ընթացքում Կոմիտե  
ներկայացնել հաշվետվություն,

4.5.3. Կոմիտեի պահանջով տրամադրել Պայմանագրի կատարման վերաբերյալ  
անհրաժեշտ ընթացիկ տեղեկատվություն,

4.5.4. գիտական միջոցառման տեղեկատվական նյութերում, զեկույցների սեղմագրերի և  
նյութերի ժողովածուների տիտղոսաթերթերում, ինչպես նաև գիտական միջոցառման  
վերաբերյալ պաստառում տեղադրել համապատասխան տեղեկատվություն Կոմիտեի  
տրամադրած ֆինանսական աջակցության վերաբերյալ,

4.5.5. գիտական միջոցառում չանցկացնելու, Կոմիտեի միջոցով տրամադրված գումարը չծախսելու կամ ոչ ամբողջությամբ ծախսելու դեպքում գրավոր տեղեկացնել Կոմիտեին և չծախսված ֆինանսական միջոցները փոխանցել Կոմիտեի գանձապետական հաշվեհամարին:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

### ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/Հ 900011033033

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Աշխատակազմի ղեկավար՝ \_\_\_\_\_

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կ.Տ.

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

\_\_\_\_\_ (անվանումը)

\_\_\_\_\_ (հասցեն)

\_\_\_\_\_ (բանկային վավերապայմանը)

Տնօրեն/ղեկավար՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

N \_\_\_\_\_ պայմանագրի

Հ/հ	Ծախսերի անվանում	Միավոր	Միավորի արժեք	Քանակ	Ընդամենը (հազար դրամ)
1.	Մասնակիցների գործուղման ծախսեր՝				
	<i>ա) ճանապարհածախս</i>				
	<i>բ) գիշերավարձ</i>	մարդ x օր			
	<i>գ) օրապահիկ</i>	մարդ x օր			
2.	Տրանսպորտային ծախսեր (դիմավորում, ճանապարհում, էքսկուրսիաներ և այլն)				
3.	Դահլիճների և տեխնիկայի վարձակալում	հատ x օր			
4.	Ինտերնետային ծառայությունների հետ կապված ծախսեր				
	<i>ա) կայքի ստեղծում</i>				
	<i>բ) կապի ապահովում</i>				
5.	Տեղեկատվական նյութերի հրապարակում	հատ			
6.	Պաստառների տպագրում	հատ			
7.	Ջեկույցների սեղմագրերի հրատարակում	հատ			
8.	Ջեկույցների հրատարակում	հատ			
9.	Գրենական պիտույքներ				
	<i>ա) պայուսակ</i>	հատ			
	<i>բ) նոթափեր</i>	հատ			
	<i>գ) գրիչ</i>	հատ			
	<i>դ) կրծքանշան (badge)</i>	հատ			
10.	Տնտեսական ծախսեր (ապրանքներ)				
11.	Կազմտեխնիկա				
	<i>ա) համակարգիչ</i>	հատ			
	<i>բ) փայիչ</i>	հատ			
	<i>գ) պրոյեկտոր</i>	հատ			
	<i>դ) այլ</i>	հատ			
12.	Ներկայացուցչական ծախսեր				
	<i>ա) ընդունելություն</i>	մարդ			
	<i>բ) պաշտոնական ընթրիք</i>	մարդ			
	<i>գ) հանդիսավոր միջոցառումներ</i>	մարդ			
	<i>դ) փակման արարողություն</i>	մարդ			
13.	Սուրճի ընդմիջումների ծախսեր	մարդ x օր			
14.	Մշակութային միջոցառումներ				
15.	Չնախատեսված ծախսեր				
16.	Կազմակերպման և անցկացման աշխատանքների մեջ ներգրավվածների վաճառություն				
17.	<b>Ընդամենը</b>				
18.	<b>ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հատկացված գումարը</b>				

Կազմկոմիտեի նախագահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N° \_\_\_\_\_

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և \_\_\_\_\_ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր \_\_\_\_\_ի

*(գիտական կազմակերպության անվանումը)*

*(անուն, ազգանուն)*

(այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի N° 450-րդ հոդվածի, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրով Կոմիտեն ՀՀ 20.. թվականի պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի «Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման աջակցություն» ենթածրագրի ֆինանսական միջոցներից Կազմակերպությանն է տրամադրում ֆինանսական միջոցներ՝ \_\_\_\_\_

*(ժամկետները, անցկացման վայրը, միջոցառման անվանումը)*

Երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար:

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

Պայմանագրի գինը (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը) կազմում է \_\_\_\_\_ ՀՀ դրամ:

*(թվերով և բառերով)*

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.4 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դադարում է

Պայմանագրի 4.5.2 կետով նախատեսված հաշվետվությունն ընդունելու մասին հանձնման-  
ընդունման արձանագրության ստորագրմամբ:

3.5 Պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել գործող օրենսդրությամբ սահմանված  
կարգով:

3.6 Կոմիտեն ֆինանսական միջոցները փոխանցում է Կազմակերպության բանկային  
հաշվեհամարին՝ Պայմանագիրը կնքելու օրվանից 20 օրվա ընթացքում:

#### **4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1. Պայմանագրի Կողմերն ունեն «Երիտասարդ գիտնականների դպրոցի  
կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգով»  
նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

4.2. Կոմիտեն իրավունք ունի.

4.2.1. ստուգել Կազմակերպության կողմից Պայմանագրով ստանձնած  
պարտավորությունների իրականացման ընթացքը,

4.2.2. պահանջել կազմակերպվող միջոցառմանն առնչվող փաստաթղթեր և այլ անհրաժեշտ  
տեղեկատվություն:

4.3. Կազմակերպությունն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրի կատարումից՝  
Կոմիտեի կողմից Պայմանագրի 3.3 կետի խախտման դեպքում:

4.4. Կոմիտեն պարտավոր է Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում  
տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.5. Կազմակերպությունը պարտավոր է.

4.5.1. Պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելիս առաջնորդվել ՀՀ  
գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Գնումների մասին» և «Հաշվապահական  
հաշվառման մասին» ՀՀ օրենքների պահանջներով,

4.5.2. երիտասարդ գիտնականների դպրոցի ավարտից հետո 15 օրվա ընթացքում  
Կոմիտե ներկայացնել հաշվետվություն,

4.5.3. Կոմիտեի պահանջով տրամադրել Պայմանագրի կատարման վերաբերյալ  
անհրաժեշտ ընթացիկ տեղեկատվություն,

4.5.4. երիտասարդ գիտնականների դպրոցի տեղեկատվական նյութերում, զեկույցների  
սեղմագրերի և նյութերի ժողովածուների տիտղոսաթերթերում, ինչպես նաև երիտասարդ  
գիտնականների դպրոցի վերաբերյալ պաստառում տեղադրել համապատասխան  
տեղեկատվություն Կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցության վերաբերյալ,

4.5.5. երիտասարդ գիտնականների դպրոց չանցկացնելու, Կոմիտեի միջոցով

տրամադրված գումարը չծախսելու կամ ոչ ամբողջությամբ ծախսելու դեպքում գրավոր տեղեկացնել Կոմիտեին և չծախսված ֆինանսական միջոցները փոխանցել Կոմիտեի գանձապետական հաշվեհամարին:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

### ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/Հ 900011033033

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Աշխատակազմի ղեկավար՝ \_\_\_\_\_

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կ.Տ.

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

\_\_\_\_\_ (անվանումը)

\_\_\_\_\_ (հասցեն)

\_\_\_\_\_ (բանկային վավերապայմանը)

Տնօրեն/ռեկտոր՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կ.Տ.



# ՆԱԽԱՀԱՇԻՎ

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

N \_\_\_\_\_ պայմանագրի

Հ/հ	Ծախսերի անվանում	Միավոր	Միավորի արժեք	Քանակ	Ընդամենը (հազար դրամ)
1.	Մասնակիցների գործուղման ծախսեր՝				
	<i>ա) ճանապարհածախս</i>				
	<i>բ) գիշերավարձ</i>	մարդ x օր			
	<i>գ) օրապահիկ</i>	մարդ x օր			
2.	Տրանսպորտային ծախսեր (դիմավորում, ճանապարհում, էքսկուրսիաներ և այլն)				
3.	Դահլիճների և տեխնիկայի վարձակալում	հատ x օր			
4.	Ինտերնետային ծառայությունների հետ կապված ծախսեր				
	<i>ա) կայքի ստեղծում</i>				
	<i>բ) կապի ապահովում</i>				
5.	Տեղեկատվական նյութերի հրատարակում	հատ			
6.	Պաստառների տպագրում	հատ			
7.	Զեկույցների սեղմագրերի հրատարակում	հատ			
8.	Զեկույցների հրատարակում	հատ			
9.	Գրենական պիտույքներ				
	<i>ա) պայուսակ</i>	հատ			
	<i>բ) նոթափեր</i>	հատ			
	<i>գ) գրիչ</i>	հատ			
	<i>դ) կրծքանշան (badge)</i>	հատ			
10.	Տնտեսական ծախսեր (ապրանքներ)				
11.	Կազմտեխնիկա				
	<i>ա) համակարգիչ</i>	հատ			
	<i>բ) փայիչ</i>	հատ			
	<i>գ) պրոյեկտոր</i>	հատ			
	<i>դ) այլ</i>	հատ			
12.	Ներկայացուցչական ծախսեր				
	<i>ա) ընդունելություն</i>	մարդ			
	<i>բ) պաշտոնական ընթրիք</i>	մարդ			
	<i>գ) հանդիսավոր միջոցառումներ</i>	մարդ			
	<i>դ) փակման արարողություն</i>	մարդ			
13.	Սուրճի ընդմիջումների ծախսեր	մարդ x օր			
14.	Մշակութային միջոցառումներ				
15.	Չնախատեսված ծախսեր				
16.	Կազմակերպման և անցկացման աշխատանքների մեջ ներգրավվածների վառձառուռություն				
17.	<b>Ընդամենը</b>				
18.	<b>ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հատկացված գումարը</b>				

Կազմկոմիտեի նախագահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)